600.0292.26.10.16

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2016 թվականի №292Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի №167Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի հոկտեմբերի 3-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 7-ի «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային ամրակցված հեռախոսային ցանցի միջազգային ազդակների հանգույցի կոդի, ոչ աշխարհագրական կոդի և համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №167Ա որոշման՝

   1) 1-ին կետից հանել «ինչպես նաև» բառերը.

   2) 1-ին կետում «շարքերը» բառից հետո լրացնել «, «0800» կոդով անվճար զանգահարվող ծառայությունների (ֆրի ֆոն) 00000-ից մինչև 00049-ը և «0900» կոդով զանգահարվող հավելավճարով ծառայությունների 00200-ից մինչև 00249-ը համարները» բառերը.

3) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3.1 կետում «շարքերը» բառից հետո լրացնել «, «0800» կոդով անվճար զանգահարվող ծառայությունների (ֆրի ֆոն) և «0900» կոդով զանգահարվող հավելավճարով ծառայությունների համարները» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
26 հոկտեմբերի 2016թ.
ժամը 16$^{00}$